ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ

ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿԸ

ՄԵՆՔ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ԱՍՏԾՈՒՆ՝ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀՈՐԸ, և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, և Սուրբ Հոգուն:

2 Մենք հավատում ենք, որ մարդիկ կպատժվեն իրենց իսկ գործած մեղքերի, այլ ոչ թե Ադամի օրինազանցության համար:

3 Մենք հավատում ենք, որ Քրիստոսի Քավության շնորհիվ ողջ մարդկությունը կարող է փրկվել՝ հնազանդվելով Ավետարանի օրենքներին և արարողություններին:

4 Մենք հավատում ենք, որ Ավետարանի առաջնային սկզբունքներն ու արարողություններն են. առաջին՝ Հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս. երկրորդ՝ Ապաշխարություն. երրորդ՝ ընկղմամբ Մկրտություն մեղքերի թողության համար. չորրորդ՝ Ձեռնադրում Սուրբ Հոգու պարգևի համար:

5 Մենք հավատում ենք, որ Ավետարանը քարոզելու և նրա արարողությունները սպասավորելու համար, մարդ պետք է կանչված լինի Աստծո կողմից՝ մարգարեությամբ և իշխանություն ունեցողների ձեռնադրմամբ:

6 Մենք հավատում ենք նույն կազմակերպությանը, որը գոյություն ուներ Նախնական Եկեղեցում՝ իր առաքյալներով, մարգարեներով, հովիվներով, ուսուցիչներով, ավետարանիչներով և այլն:

7 Մենք հավատում ենք լեզուների, մարգարեության, հայտնության, տեսիլքների, բժշկության, լեզուների թարգմանության և այլ պարգևների:

8 Մենք հավատում ենք, որ Աստվածաշունչն Աստծո խոսքն է, որքան որ այն ճիշտ է թարգմանված. մենք հավատում ենք նաև, որ Մորմոնի Գիրքն Աստծո խոսքն է:

9 Մենք հավատում ենք այն ամենին, ինչ Աստված հայտնել է, այն ամենին, ինչ Նա այժմ հայտնում է, և հավատում ենք, որ Նա դեռ շատ մեծ ու կարևոր բաներ է հայտնելու Աստծո Արքայության վերաբերյալ:

10 Մենք բառացիորեն հավատում ենք Իսրայելի Տան հավաքմանը և նրա Տասը Ցեղերի վերականգնմանը. որ Սիոնը (Նոր Երուսաղեմը) կկառուցվի Ամերիկյան աշխարհամասում. որ Քրիստոսն անձամբ կթագավորի երկրի վրա. և որ երկիրը կնորանա և կընդունի իր դրախտային փառքը:

11 Մենք պահանջում ենք մեր իսկ խղճի թելադրանքով Ամենազոր Աստծուն երկրպագելու արտոնությունը, և նույն արտոնությունը վերապահում ենք բոլոր մարդկանց. թող նրանք երկրպագեն ինչպես, որտեղ կամ ինչ որ կամենում են:

12 Մենք հավատում ենք թագավորներին, նախագահներին, կառավարիչներին և մյուս իշխանավորներին հպատակվելուն, օրենքին հնազանդվելուն, այն հարգելուն և պաշտպանելուն:

13 Մենք հավատում ենք ազնիվ, ճշմարիտ, մաքրաբարո, բարյացակամ, առաքինի լինելուն և բոլոր մարդկանց բարիք անելուն: Իրավ, կարող ենք ասել, որ մենք հետևում ենք Պողոս Առաքյալի հորդորանքին. Ամեն բանի հավատում ենք, ամեն բանի համար հույս ունենք, համբերել ենք շատ բաների և հույս ունենք, որ կկարողանանք համբերել բոլոր բաներին: Եթե մի բան առաքինի է, գեղեցիկ, բարեհամբավ, գովեստի արժանի,– մենք ձգտում ենք այդ ամենին:

Ջոզեֆ Սմիթ

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2011 IRI. Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in the USA. 1/11. 1/11. *Articles of Faith.*-ի թարգմանությունը: Armenian. 64370 201

ARMENIAN
4 02643 70201 1
64370 201